№ 158 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 23

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 23 № 158

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ
Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան .	6 դօլլար
Եւրոպա » . .	30 ֆրանկ
Պարսկաստան » .	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск. телеф. № 10—56

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենօգրաֆիա։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

ԿՈՒՐՍԵՐ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑՎԱԾ Է ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆ

Կուրսերի կանօնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տըրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.
(առ.) (չ. կ.) 20—3

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ
ԵՐԿՍԵՌ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ
համար հարկաւոր է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
փորձված, մանկավարժ և վարչական անձն։ Պայմանները՝ 14 դասի և աւագութեան համար 1000—1200 ր.։ Հասցէ՝ Карсъ, Попечительству армянской школы.
(շ. ե.) առ. (վճ.) 2—2

ԳԱՆՁԱԿԻ
Ս. Յովհաննէս եկեղ. ծխական երկսեռ դպրոցի համար
Հարկաւոր են՝
հմուտ ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
12 դասով, 1000 ր. ռոճիկ.
ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ 18—24 դասով, ժամը 25 և 30 ր.։
Դիմել մինչև յուլիսի 25-ը՝ Елисаветполь, попечительству арм. приходской во имя св. Іоанна церкви школы.
(ե. հ. կ.) ա. (786) 3—3

ՔԻՇԻՆԵՒ
ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ՏՆԱՆԿՆԵՐԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ
հրաւիրում է ցանկացող անձանց ստանալ հայոց լեզուի, կրօնի ուսուցչի պաշտօն դպրոցում և եկեղեցու ռեգենտի. շտապել ուղարկել Հոգաբարձութեան անունով բոլոր հարկաւոր դօկումենտները կամ պատճէնները, որքան կարելի է շուտ, այս հասցէով՝ Քիշինև, Հայոց փողոց, № 19, Հոգաբարձութեան քարտուղար Թ. Կ. Կայմակչուն (Θ. К. Каймакчи)։

Պահանջվում է վկայական երգեցողութեան կուրսը աւարտած լինելու մասին. ցանկալի է Եկմալեանի սիստեմով, ինչպէս և ազատ ռուսերէն խօսելու կարողութիւն։ Բոլոր այդ պաշտօնների համար ռոճիկ սահմանվում է 820 ր. տարին, առանց բնակարանի։ Աւելի մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ Թիֆլիսում, Հայոց Դպրոցների Ուսուցիչների Բիւրօյի նախագահ պ. Իս. Յարութիւնեանից։
Նախագահ՝ Ս. Մելիք-Սարգսեան
Քարտուղար՝ Թ. Կայմակչի
(ապ.) առ. 2—2

ԱԶԱԿՑԵՑԷՔ

«Մշակի» № 150-ի մէջ տպված էր մի նամակ, որի հեղինակը խնդրում է ցոյց տալ՝ թէ որտեղ կան գնելու հողեր գիւղացիների համար։

Նա աչքի առաջ ունի Սիսիանի գիւղացիներին։

Բայց նոյն հարցը նշանակութիւն ունի և ուրիշ տեղերի գիւղացիների համար։ Ուստի և ծախվող հողերի ցուցակը կարող է հետաքրքրական և պիտանի լինել աւելի ընդարձակ խաւերի համար, քան աչքի առաջ ունի նամակի հեղինակը։

Մենք յայտնել էինք, որ հողեր են որոնում Ջաւախքի, Շիրակի, Վայոց-Ձորի և ուրիշ տեղերի գիւղացիները։ Նրանցից մի քանիսը արդէն գտել են հողեր և ներկայումս պայմանախօսութեան մէջ են կալուածատէրերի հետ. բայց այդպիսիների թիւը դեռ սահմանափակ է։ Շատերը շարունակում են որոնել տեղեր, բայց հեշտութեամբ չեն գտնում յարմարաւորը և ձեռնտուն։

Մի բան մխիթարական է, որ գիւղացիները արդէն զգում են, որ իրանք պէտք է օգնեն իրանց և, յոյս չը դնելով պետական նոր ազատ հողերի բաշխման վրա, իրանց միջոցներով ապահովեն տնտեսութիւնը, թէ հողի պակասորդը լրացնելով գնած հողերով և թէ բարձրացնելով հողի արդիւնաբերութիւնը բարւոքումներ և կատարելագործութիւններ մտցնելով։

Քանի գնում է խորանում է գիւղական շրջանում այդ զգացմունքը և ստեղծում է տրամադրութիւններ թէ հող գնելու և թէ տնտեսութիւնը բարւոքելու ձեռնարկութիւնների համար։

Եւ անկասկած՝ ազգաբնակութեան զանազան խաւերում գործող ձեռնհաս անձերի վրա պարտականութիւն է ծանրանում օգտվել ժողովրդի մէջ այդ նոր կազմվող համոզմունքից ու տրամադրութիւնից և հեշտացնել գիւղականի համար թէ հող գնելը և թէ տնտեսութիւնը բարւոքելը։

Մենք առաջներում մի քանի անգամ լսել ենք ճառախօսութիւններ և ծրագիրներ հողեր գնելու գործի կազմակերպութեան մասին։ Այդ այն ժամանակներն էին, երբ իրանք գիւղացիները դեռ շատ էլ չէին մտածում հող գնելու մասին և սպասում էին մանանայի, որ ինքն իրան պիտի իջնէր երկնքից։

Այժմ ինքը գիւղացին է հարցը դրել ասպարէզի վրա։ Նա այլևս չէ հաւատում նուէրների և բարեգործական բաշխումների։ Նա նախազգում է, որ մի քանի ժամանակից յետոյ բոլորովին անկարող պէտք է լինի շարունակել իր տնտեսութիւնը նախկին տեղերում և նախկին ձևերով, ուստի և սկսել է աւելի ուշադրութեամբ վերաբերվել այն առաջարկներին, որոնք արվում են նրա տնտեսական բարւոքման համար։

Եւ ուրեմն՝ հասարակութեան այն գործօն ուժերը, որոնք գիտակցում են գիւղի և նրա բնակիչների կարիքները, պէտք է միջոցներ ձեռք առնեն դիւրացնելու հող որոնելու գործը և աջակցեն գիւղացուն իրագործելու իր դրած նպատակը։

Եւ անշուշտ՝ ցանկալի է, որ մեր մէջ գոյութիւն ունեցող ընկերութիւններից և հասարակական հաստատութիւններից նրանք, որոնք յարմարութիւն ունեն, վերցնէին իրանց վրա աշխատանք և բարի միջնորդ հանդիսանային հողակարօտների և հողավաճառների միջև։

Այդ տեսակ մի միջնորդի դեր կատարելու պատրաստականութիւն յանձն է առնում Բ. Կուլտուրական Միութիւնը, որքան այդ երևում է նրա հրատարակած յայտարարութիւնից։

Անհրաժեշտ է, սակայն, որ հող գնել ցանկացողներից կազմվէին յատուկ ընկերակցութիւններ և ձեռնարկէին գործին անմիջական հոգատարութեամբ՝ իրագործելու հողերի գնման ծրագիրները։

Խնդիրը հերթական է և կարևոր։

Ա. Քալանթար

ՄԵԾԱՄԵԾ ԴԷՊՔԵՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

II

Թիւրքիայի մինչև այսօր տառապեալ, ճնշված ու հարստահարված թշուառ հայ ժողովուրդը ի՞նչ պէտք է անէ պատմական այս կարևոր մոմենտում, պատմական ամենամեծ դէպքերի նախօրեակին։

Այս հարցը տուինք մենք անցեալ անգամ և այժմ կաշխատենք պատասխանել։

Ի՞նչ էին կամենում մինչև այսօր Թիւրքիայի հայերը։

Նրանք կամենում էին քաղաքացիական իրաւունքներ ունենալ, մուսուլմանների հետ համահաւասար իրաւունքներ վայելել, քաղաքացիական, դատաստանական, վարչական բարենորոգութիւններ տեսնել մտցված իրանց ապրած երկրում՝ նրանք կամենում էին ունենալ անձի, գոյքի, պատւի ապահովութիւն, արդար, ամենքի համար անխտիր օրէնքներ, որպէս զի կարողանան զարգանալ տնտեսապէս և մտաւորապէս. Նրանք կամենում էին պահպանել իրանց ազգայնական յատկութիւնները, իրանց լեզուն, ունենալ իրանց մայրենի դպրոցները և, վերջապէս, ունենալ տեղական ինքնավարութիւն։

Բայց ամենագլխաւորը՝ նրանք ձգտում էին ձեռք բերել կեանքի, գոյքի, պատւի ապահովութիւն։

Արդեօք նոր հրատարակված կամ վերականգնված սահմանադրութիւնը կը տայ իրողապէս հայերին մարդկային գոյութեան այդ ամենատարրական իրաւունքները։ Ահա այդ հարցն է, որ պէտք է զբաղեցնէ ներկայումս բոլոր հայերին։

Սուլթանի հրովարտակների, խոստումների վրա ոչ մի յոյս չէ կարելի դնել. դարերն, խիստ դառն փորձեր սովորեցրել են մեզ բոլորովին թերահաւատութեամբ վերաբերվել նրա յայտարարութիւններին և խոստումներին։ Սակայն երիտասարդ-Թիւրքերի հրատարակած պրօկլամացիաները, վերջապէս նրանց ծրագիրը, դրական խոստումներ և գրաւականներ են տալիս այդ մասին։ Ճիշտ է, երիտասարդ-Թիւրքերի շարժումը՝ խոր ազգայնական շարժումն է և նրա ամենագլխաւոր նպատակն է խափանել մի անգամ ընդ միշտ եւրոպական միջամտութիւնը Թիւրքիայի գործերի մէջ, ճիշտ է, այդ շարժումը հակառակ է ազգային և տեղական որևէ աւտօնօմիայի, ձգտում է ի մի ձուլել օսմանեան կայսրութեան մէջ ապրող բոլոր տարբեր և այլազան տարրերը ու զանգուածները, և այդ տեսակէտից, երիտասարդ-Թիւրքերի ծրագրին յարելը համազօր է ջնջման բոլոր այն իրաւունքների, որ հայ ժողովուրդը Թիւրքիայում ձեռք է բերել միջազգային ակտերի հիման վրա— սակայն, առ այժմ խնդիրը այդ իրաւունքների մասին չէ, այլ այժմ ամենագլխաւոր հարցն այն թէ է, կիրագործվէ՞ն այն անյետաձգելի և ամենակենսական պահանջները, կեանքի այն տարրական պայմանները, առանց որոնց ոչ մի պետութեան հպատակներ, ոչ մի երկրի քաղաքացիներ չեն կարող խաղաղ կուլտուրական զարգացումն ունենալ, այն է կեանքի, գոյքի և պատւի ապահովութիւն։

Ենթադրելով, որ այժմեան սահմանադրութիւնը կը տայ Թիւրքիային գոյութեան այդ կենսական պահանջները, մենք գտնում ենք, որ ամենից առաջ հայերը մի ամենաանհրաժեշտ և անյետաձգելի պարտականութիւն ունեն կատարելու, այն է՝ որ Թիւրքիայից փախստական և աստանդական բոլոր պանդուխտ հայերը, որոնք այսօր ցրված են Ռուսաստանում, Ամերիկայում, Եգիպտոսում, Բուլղարիայում, աշխատեն վերադառնալ իրանց հայրենիքը, տիրանալ իրանց թողած, լքված հողերին, արտերին, դաշտերին, տներին և օջախներին, վերսկսել իրանց երկրագործական զբաղմունքները, արդիւնաբերական, առևտրական ձեռնարկութիւնները։

Հայերի առաջին գործը պէտք է լինի վերահաստատվել հայրենիքում, տիրանալ իրանց դարևոր հողերին, վերաշինել իրանց քանդված, աւերված օջախները։

Այդ նպատակով պէտք է գործեն բոլոր այն հաստատութիւնները, որոնք իրանց իրաւունք և միսիա են համարել և համարում զբաղվել Թիւրքահայերի խնդրով։ Եւ նոյն իսկ մեր յեղափոխական կազմակերպութիւնները, որոնց գիտակցական կամ անգիտակցական գործունէութիւնը հայ ժողովրդի համար այնքան մեծամեծ աղէտների առիթ դարձաւ, իրանց գիտակցական կամ անգիտակցական յանցանքը կարող են քաւել, եթէ նպաստեն այդ նպատակի իրագործման, որովհետև առանց հողի ոչ մի ժողովուրդ, ոչ մի ազգ չէ կարող յարատևել, բարգաւաճել, զարգանալ կուլտուրապէս։ Եւ հայը Թիւրքիայում պէտք է ոչ թէ նոր հողեր գրաւէ, ձեռք բերէ, յափշտակէ օտարի ձեռքից, ոչ, այլ վերստանայ այն հողը, որ հազարաւոր տարիներ ռոգել է իր ճակատի քրտինքով, հերկել, մշակել իր ձեռքերով և որը նա ստիպված է եղել լքանել բռնակալական ռէժիմի պատճառով։

Թիւրքահայերի իրանց հայրենիքը վերադառնալու խնդիրը, որ արծարծեց «Մշակը» իր անցեալ օրվայ առաջնորդող յօդուածով, կազմում է այսօր և պէտք է կազմէ մեր ամենագլխաւոր հոգսերի առարկան։

Դրանից աւելի կենսական հարց այսօր մենք չունենք։

Հ. Առաքելեան

ԹՈՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

Կ. Պօլիս, 19 յուլիսի

Սուլթանի պաշտօնական քարտուղար Իզզէթ-փաշան փախաւ գերմանական դեսպանութեան օգնութեամբ։

Թիւրքաց լրագիրները սաստիկ յարձակվում են իտալական դեսպանի վրա այն բանի համար, որ վերջինս նպաստեց մինիստր Սէլիմ-Մէլհամէի փախուստին, որը սուլթանի իրադէով արտաքսված է ծառայութիւնից։

Պաշտօնապէս հաղորդում են, որ յուլիսի 18-ին, հաւաքական ունկնդրութեան ժամանակ, երբ դիպլօմատիական մարմինը շնորհաւորութիւններ մատուցեց սուլթանին սահմանադրութիւն շնորհելու առիթով, սուլթանը իր գոհունակութիւնը արտայայտեց և յայտնեց, որ իր միակ ցանկութիւնն է ապահովել երկրի բարօրութիւնը, և սահմանադրութիւնն այսուհետև երբէք այլևս չի խախտվի։

(«Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 19 յուլիսի

Միտինգները շարունակվում են։ Հռետորները պահանջում են ոչ-ցանկալի անձանց հեռացումը։ Կ. Պօլսի բանտերից ազատված են 963 քրէական յանցաւորներ։ Մակեդօնիայից տեղեկութիւններ են ստացվում չէտաների գործունէութեան դադարման մասին։ Յունական և բուլղարական փօխվօղները գալիս են քաղաքները և հնազանդութիւն ու համերաշխութիւն են յայտնում երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտներին։ Սալօնիկում Թիւրք օֆիցէրները պատիւներ տուին յունական և բուլղարական փօխվօղներին։ Չէտայականները եղբայրանում էին Թիւրքերի հետ. ամեն տեղ հանգստութիւն է տիրում։ Քրէական յանցաւորներից շատերին, որոնք ազատված էին բանտերից, երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտը բռնել տուեց և նորից բանտը դրեց։ («Հ. Գ.»)

Պարիզ, 20 յուլիսի

Լօնդօնի կաբինետը ցանկութիւն յայտնեց ֆրանսիական կառավարութեանը յետաձգել Բ. Դրան անելիք առաջարկութիւնը թուրցիկ զօրաբաժիններ կազմակերպելու մասին, որովհետև Մակեդօնիան հանգստացել է և ըստ երևոյթին մինչև անգամ կատարելապէս դադարել է այնտեղ չէտաների գործունէութիւնը։ Ֆրանսիական կաբինէտը ընդունեց այդ առաջարկութիւնը։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս.—Համարեա դադարեցրին իրանց գործունէութիւնը մակեդօնական ժանդարմէրիայի եւրօպացի օֆիցէրները։ Ֆրանսիացիները հաւաքվեցին Սէրէսում, անգլիացիները—Դրամայում, ռուսները, աւստրիացիները և իտալացիները դեռևս իրանց տեղերում են մնում։

Չէ հաստատվում Իզզէթ-փաշայի կալանաւորման լուրը Դարդանէլում։

Ինչպէս հաղորդում են անգլիական աղբիւրներից, բռնված «Մարի» շոգենաւը արձակված է անգլիական դեսպանի կարգադրութեամբ և Իզզէթ-փաշան յանձնված չէ։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 20 յուլիսի

Թիւրքաց լրագիրները իրանց գոհունակութիւնն են յայտնում յուլիսի 19-ին հրատարակված սուլթանական խաթթը-հիւմայունի առիթով, որը հաստատում է սահմանադրական ազատութիւնները և յանձնարարում է մեծ վէզիրին կազմել նոր կաբինէտ, որի մէջ բացի զինւորական և ծովային մինիստրներից, որոնց սուլթանը անձամբ է նշանակում, մնացածներին նշանակում է մեծ վէզիրը։

Ադրիանուպօլսից հիւպատոսական զեկուցումների համեմատ, զինւորները հրաժարվել են հնազանդվել օֆիցէրներին։ Քաղաքում անիշխանութիւն է տիրում։ Յուլիսի 20-ին զօրքերը Թօփխանէ հրապարակի վրա երդումն տուեցին սահմանադրութեան

Դարդանէլում անգլիական «Մարի» շոգենաւի վրա կալանաւորվեց փախած Իզզէթ-փաշան։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս.—«Սաբահ» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Ադրիանուպօլից Կ. Պօլիս եկան 2-դ զօրաբաժնի 300 զինւորներ օֆիցէրների ուղեկցութեամբ՝ շնորհակալութիւն յայտնելու սուլթանին սահմանադրութիւն շնորհելու համար։ Դիմաւորեցին նրանց սուլթանի ուղարկած զօրքերը և բազմաթիւ հասարակութիւն. զինւորները հիւրասիրվեցին Համիդիէ մզկիթի գաւթում, ապա նրանք շարքով կանգնեցին Եըլդըզ-Քէօշկի առաջ։ Սուլթանը երևաց պատուհանի մօտ։ Նա հրաւիրեց զօրաբաժնի հրամանատարին և ասաց նրան, որ պահանջում է զինւորներին, որպէս իր զաւակներին։ Զօրքերը հիացմունքով ողջունեցին սուլթանին։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 20 յուլիսի

Յուլիսի 17-ին այն լուրերի պատճառով, թէ Իզզէթ-փաշան մտադիր է փախչել «Պալանտ» շոգենաւով, ժամը 4-ին Գալաթայի ծովափի վրա հաւաքվեց ահագին ամբոխ և ներս խուժեց շոգենաւը, որոնելով Իզզէթ-փաշային։ Զօրենաւի հեռանալու ժամանակ նոր լուրեր տարածվեցին, որ իբր թէ Իզզէթ-փաշան փախել է ծպտեալ կերպով և իբր թէ պրէֆէկտուրայի պաշտօնեաները դիւրացրել են նրա փախուստը։ Ամբոխը ներս խուժեց պրէֆէկտուրա և գանակոծեց ընդհանուր քարտուղար Ալի-բէյին։ Սարսափ տարածվեց, խանութները փակվեցին։ Այդ դէպքերից յետոյ ամբոխը ցոյց սարքեց Բ. Դրան առջև։ Մեծ վէզիրը հանգստացրեց ցուցարարներին։

Հիւպատոսական հեռագիրները հաղորդում են, որ սահմանադրութեան հրատարակումը հիացմունք պատճառեց փոքր-ասիական քաղաքների մեծամասնութեան մէջ։ Ուսկիւբում, Վալօնում և Բէրաթում հանգստութիւն է տիրում։ Սալօնիկում շարունակվում է ցոյցը։ Մի քանի գաւառներից անհաստատ լուրեր են ստացվել։ Զմիւռնիայի բանտում տեղի ունեցան անկարգութիւններ, որովհետև քրէական յանցաւորները ցանկանում էին ազատութիւն ձեռք բերել քաղաքական յանցաւորների հետ միասին։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 21 յուլիսի

Չէ հաստատվում այն լուրը, որ իբր թէ Իզզէթ փաշայի փախուստին նպաստեց գերմանական դեսպանութիւնը։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս.—Պաշտօնապէս ուղղվում են կաբինէտի նոր կազմի մասին այստեղի լրագիրների արտակարգ յաւելուածների մէջ սպրդած անճշտութիւնները։ Սաիդ-փաշան մնում է մեծ վէզիր, Աբդուրրահման փաշան նշանակվում է ոչ թէ մինիստր-նախագահ, այլ մինիստր առանց պօրտֆէյլի, Հասան-Ֆէհմի-փաշան նշանակվում է արդարադատութեան մինիստր, զինուորական պատրաստութիւնների դէպարտամէնտի հրամանատար Հաջի-Ակիֆ նշանակվում է ներքին գործերի մինիստր, մեծ վէզիրութեան պետական քարտուղարի օգնական Մէհմէդ-Ալի վակուֆների մինիստր, պաշտօնեաներ ընտրող յանձնաժողովի նախագահ Տէվֆիկ—երկրագործութեան և լեռնային գործի մինիստր։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս.—Մինչև կէս գիշեր ամեն տեղ բաժանում էին խատտը-հիւմայինները պետական հիմնական օրէնքների մասին։ Սուլթանի ուկազը նախ և առաջ հիմնաւորում է սահմանադրութեան վարչութիւնը և յայտնում է, որ այժմ կայսրութիւնը հասունացել է սահմանադրական րէժիմի համար և այսուհետև սահմանադրութիւնը երբէք չի խախտվի։ Ապա գալիս են 15 յօդուածներ, որոնց մէջ ի միջի այլոց մատնացոյց է անվում, որ բոլոր հպատակները վայելելու են անձնական ազատութիւն, ոչ որ առանց օրինական հիմքի չէ կարող քննութեան ենթարկվել, ձերբակալվել, բանտարկվել և պատժվել. թոյլատրելի չէ արտակարգ դատարանների նշանակումը. իւրաքանչիւր մարդու բնակարանը անձեռնմխելի է. բոլոր հպատակները վայելում են տեղափոխութեան կատարեալ ազատութիւն. պրէսսան մինչև մամուլի տակից լոյս տեսնելը չէ ենթարկված կառավարութեան կօնտրօլին. պօստը իրաւունք չունի բանել մասնաւոր նամակները և լրագիրները. ուսուցման ազատութիւն է սահմանվում. պաշտօնեաները պարտաւոր չեն հնազանդվել այնպիսի հրամանների, որոնք հակառակ են օրէնքներին, և կարող են, երբ ուզենան, հրաժարական տալ. մեծ վէզիրի առաջարկութիւնները պէտք է սուլթանի հաւանութիւնը ստանան։ Ապա ուկազում հրաման է տրվում պաշտօնեաներին այն մասին, թէ ինչպէս պէտք է տարվայ սկզբին հրատարակել եկամուտների և ծախսերի նախահաշիւը լիակատար ծաւալով։ Գոյութիւն ունեցող օրէնքները փոխելու համար անհրաժեշտ օրինագծերը պէտք է ներկայացվեն պատգամաւորների ժողովին։ Զօրքը պէտք է վերակազմվի։ Ուկազը վերջանում է բարեմաղթութեամբ, այն է՝ Աստուած աջողութիւն տայ պետական սկզբնաւորութիւնների մէջ։ «Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 20 յուլիսի

Յուլիսի 18-ին ժամանեց անգլիական դեսպան Լօուտէր, որին դիմաւորեցին ցոյցերով։ Երիտասարդ-թիւրքերը դիմաւորում էին նրան դրօշակներով կայարանում և ողջունում էին նրան, որպէս ազատամիտ պետութեան ներկայացուցչի։

Յուլիսի 18-ին իտալական կօլօնիայում տեղի ունեցած միտինգում կայացաւ մի որոշում, որով ողջունում են թիւրք ժողովրդին սահմանադրութեան վերածնութեան առիթով և ցաւ են յայտնում, որ Իտալիայի ներկայացուցիչը նպաստեց այն թիւրք մինիստրի փախուստին, որը հեռացել է առանց սուլթանի թոյլտուութեան։ Դեսպան Իմպէրիալին ասաց ինտէրվիւէրին, որ իր վարմունքը կանոնաւոր է համարում. իր գործողութիւններին հաւանութիւն է տուել իր կառավարութիւնը։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 19 յուլիսի

«Kölniche Zeitung» լրագիրը «Գերմանիա և Թիւրքիա» վերնագիրը կրող յօդուածում գրում է. «Գերմանիան երկար տարիների ընթացքում ցոյց տուեց, որ թիւրքական ներքին գործերում չը խառնվելու սկզբունքը ամենայարմար ճանապարհն է գոյութիւն ունեցող դժուարութիւնները վերացնելու համար։ Այդ տեսակէտը նշանակութիւն ունի և այժմ»։ Լրագիրը ուրախութիւն է յայտնում այն առիթով, որ յեղափոխութիւնը համեմատաբար խաղաղ անցաւ, առանց արիւնհեղութեան։ «Դա,—ասում է լրագիրը,—ապացուցանում է, որ թիւրք ժողովուրդը կարգապահութեան զգացմունք ունի։ Օտար միջամտութիւն չը պէտք է տեղի ունենայ, և եթէ շարժումը խուսափէ ամեն տեսակ էկցէսներից, դրանով վերացված կը լինի որևէ առիթ եւրօպացիների միջամտութեան։ Պետութիւնների միջև պէտք է տիրէ համաձայնութիւն այն բանի առիթով, որ ներկայ վայրկեանը առանձնապէս անյարմար է վերանորոգչական գործի համար Մակեդօնիայում։ Թիւրքերը իրանք են իրանց ձեռքն առնում այդ գործը. պէտք է ժամանակ տալ նրանց ցոյց տալու, որ նրանք իրանց սեփական ույժերով կարող են հասնել այն բանին, ինչ որ չէր աջողվում պետութիւններին։ Աջողութեան համար նրանց հարկաւոր է ոչ միայն բարի կամք, այլ և չափաւորութեան զգացմունք ամեն բանի մէջ»։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս.—Ադրիանուպօլսի դէպքերի մասին լրագիրները հաղորդում են, որ յուլիսի 20-ին կայարանը գրաւված էր 2-դ զօրաբաժնի մի քանի հազար մարդուց բաղկացած զօրքերով, որոնք կամենում էին գնալ Կ. Պօլիս համոզվելու համար, թէ արդեօք սուլթանը անվնաս է։ Զինուորները սպանեցին մի քանի օֆիցէրներին—վերջին օրերս քաղաքում տեղի ունեցած յեղափոխական շարժման ղեկավարներին։ Քաղաքի մի քանի ազդեցիկ անձանց աջողվեց համոզել զինուորներին ընտրել 300 պատգամաւորներ, որոնք գնացին մայրաքաղաքը և ընդունվեցին սուլթանից, և ապա անյապաղ յետ ուղարկվեցին։ Հակաօֆիցէրական շարժման դրդողները դնդային մօլլաներն էին։ Այժմ յոյս ունեն, որ կարգը Ադրիանուպօլսում կը վերականգնվի և հանրապետական ագիտացիան կը դադարի։ Յուլիսի 21-ին այստեղ եկաւ երիտասարդ-թիւրքերի կենտրոնական կոմիտէտի մի պատգամաւորութիւն, բաղկացած չորս անդամներից—3-դ զօրաբաժնի օֆիցէրներից։ («Հ. Գ.»)

—

«Бирж. Вѣд.» թերթին Լոնդոնից հեռագրում են.

Պօլսից ստացված տեղեկութիւնները շատ մռայլ գոյներով են ներկայացնում հետզհետէ ամբողջ թիւրքական կայսրութեան մէջ ստեղծվող դրութիւնը։ Ամենայուսալից պարագան Լոնդոնի քաղաքական շրջաններում համարում են այն հանգամանքը, որ խլրտումը բռնում է թիւրքական բանակի բոլոր մասերը, տարածվելով մինչև Փոքր-Ասիայի ամենահեռաւոր վիլայէթները։ Զմիւռնիայում պաշտօնանկ են եղած գեներալ-նահանգապետն ու տեղական կօմենդանտը։ Էզրինէում ձերբակալված է քաղաքացիական նահանգապետը։ Իւրաքանչիւր օր հազարաւոր թիւրքեր են գալիս Կ. Պօլիս Եւրօպայի բոլոր ծայրերից, որից երևում է, որ շարժման գլխաւոր ղեկավարները նոր քայլեր են պատրաստում։

—

Եւրօպական պետութիւններում գտնվող թիւրքական ներկայացուցիչներին ուղարկված նօտան

Եւրօպական պետութիւններում գտնվող Թիւրքիայի դիպլօմատիական ներկայացուցիչներին Պօլսից, «Бирж. Вѣд.»-ի ասելով, հետևեալ շրջաբերական նօտան է ուղարկված. «Նորին մեծութիւն սուլթանը, մեր գերագոյն իշխանը, հենց նոր հրամայեց պատգամաւորների ժողով գումարել, համաձայն այն սահմանադրութեան ոգու և իմաստի, որը նրա փառաւոր ստեղծագործութիւններից մէկն է հանդիսանում։ Արդէն գաւառական իշխանութիւններին կարգադրված է, որ անմիջապէս թեկնածուների ընտրութիւններ սկսվեն այնպիսի անձերից, որոնք օրինական իրաւունքներ ունեն պարլամենտի անդամներ ընտրվելու»։ Թիւրքիայի դիպլօմատիական ներկայացուցիչները, Պօլսից ստացված կարգադրութեան համաձայն, այդ նօտայի պատճէնները ուղարկեցին բոլոր պետութիւնների արտաքին գործերի մինիստրներին։ («Р. Ут.»)

—

Կ. Պօլիս, 21 յուլիսի

Յուլիսի 20-ին «Իկդամ» լրագիրը տպում է հետևեալ հեռագիրը Ադրիանուպօլսի կօմիտէտից. «Ի միութիւն առաջադիմութեան խնդրում ենք մեր համաքաղաքացիներին սխալ չը բացատրել ներկայ դրութիւնը. սուլթանն է մեր միակ ապաստարանը. Նրա անձնաւորութիւնը գտնվում է ամբողջ զօրքի և ազգի պաշտպանութեան տակ. օր ու գիշեր աղօթում ենք նրա կեանքի համար. մեր դիտաւորութիւնն էր միայն հեռացնել մի քանի դաւաճաններին, և այդ բանը մեծահոգութեամբ բարեհաճեց մեր փադիշահը, այդ պատճառով այժմ հարկաւոր չէ ոչ մի բանի մասին մտածել և ոչինչ պահանջել, և թող կեցցէ սուլթանը»։

Յուլիսի 19-ին Ադրիանուպօլսում երկու հետևակ գնդեր հրաժարվեցին հպատակվել երիտասարդ-թիւրքերի կօմիտէտին։ Խանութները փակվեցին։ Քաղաքում սարսափ է տիրում։ Պաշտօնեաները փախան ֆրանսիական հիւպատոսարանը։

Լրագիրների արտակարգ յաւելուածները հաղորդում են այն փոփոխութիւնների մասին, որ տեղի են ունեցել մինիստրութեան մէջ։ Շէյխ-ուլ-իսլամը մնում է իր պաշտօնի մէջ, նախկին մեծ վէզիր, այժմ արդարադատութեան մինիստր Աբդուրրահման-փաշա նշանակվում է մինիստր-նախագահ, պետական խորհրդի նախագահ Հասան-Ֆէհմի փաշան—վակուֆների մինիստր՝ Տուրխան-փաշայի փոխանակ, որ նշանակված է պետական խորհրդի նախագահ։ Քեամիլ-փաշան մնում է մինիստր առանց պօրտֆէյլի. նոյնպէս մնում են իրանց պաշտօններում արտաքին գործերի մինիստր Տէվֆիկ-փաշան, զինուորական մինիստր Օմէր Ռուշտի-փաշան, ծովային—Ռամի-փաշան, ժողովրդական լուսաւորութեան Սաիկի-բէյ։ Սալօնիկի վալի Րէուֆ փաշան նշանակված է Կ. Պօլսի պրէֆէկտ։ («Հ. Գ.»)

—

Թիւրքական պարլամենտի ընտրութիւնները

Թիւրքական դեսպանութեան անդամը Վիէննայում, «Neue Freie Presse»-ի աշխատակցի հետ խօսակցելիս, Թիւրքիայում կատարված վերջին դէպքերը վերագրում էր մի կողմից երիտասարդ-թիւրքերի շարժման աջողութեանը, իսկ միւս կողմից Սաիդ-փաշայի ազդեցութեանը։

Թիւրքական դիպլօմատն ասել է, որ պարլամենտի ընտրութիւնները կը շարունակվեն երկու ամիս։ Մի առանձին ագիտացիայից վախենալու հարկ չը կայ, որովհետև կանխաւ արդէն յայտնի է, որ երիտասարդ թիւրքերը կը կազմեն մեծամասնութիւն։

Ենթադրվում է հետևեալ վարձատրութիւնը որոշել թիւրքական պարլամենտի անդամների համար. պատգամաւորները կը ստանան ամսական 50 թուրքական լիրա (մօտաւորապէս 450 ռուբլի), իսկ սենատորները 100 ական լիրա։ («Слово»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ.—Յուլիսի 21-ին, ցերեկվայ չորրորդ ժամի վերջը Պետերբուրգ վերադարձան Ֆինեան ծոցում լողալուց յետոյ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնան Թագաժառանգ Ցեսարեվիչի և Օգոստափառ Երեխաների հետ միասին։

Երկրագործութեան մինիստրը մինիստրների խորհրդին ներկայացրեց առաջադրութիւն համալսարաններում ընդունելու առևտրական դպրոցների ութ դասարանն աւարտող աշակերտներին։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 20 յուլիսի

Կայսերական զոյգը յուլիսի 19-ի երեկոյեան «Հօհենցօլերն» նաւով ճանապարհ ընկաւ Ստոկհօլմ։ («Հ. Գ.»)

—

Ստոկհօլմ, 20 յուլիսի

Շվէդական լրագիրները գերմաներէն լեզուով ողջոյնի յօդուածներ են տպում գերմանական կայսերական զոյգի ժամանելու մասին։ («Հ. Գ.»)

—

Ստոկհօլմ.—Առաւօտեան մօտ 10 ժամին «Հօհենցօլէրն» զրահանաւը իրան ուղեկցող նաւերով ժամանեց Ֆէղբօզօլ Լարնէ, Ստոկհօլմի մօտ։ Շվէդական արքայական զոյգը շքախմբի ուղեկցութեամբ եկաւ զրահանաւը, որով ճանապարհ ընկաւ Ստոկհօլմ, ուր ժամանեց առաւօտեան 11 ժամ 20 րօպէին։ Օգոստափառ անձինք մակոյկներով գնացին ափը։ Վիլհէլմ կայսրը նշանակեց Գուստաւ թագաւորին գերմանական նաւատորմի ծովակալ։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 19 յուլիսի

Ժանտախտի դէմ կռիւ մղող յանձնաժողովը հաղորդում է, որ Ցարիցինում յուլիսի 17-ին խօլերայով հիւանդացան 10, մեռան 9, ընդամենը էպիդէմիայի սկզբից հիւանդացան 49, մեռան 28։ Աստրախանի գաւառում խօլերայով կասկածելի հիւանդութեան երկրորդ դէպքն է եղել։

Հակախօլերային ձեռնարկութիւնների համար ծախսեր անող յանձնաժողովը տուել է ներքին ջրային ճանապարհների վարչութեանը 25,000 ր. և Կովկասի Փոխարքայի տրամադրութեան տակ դրել է 30,000 ռուբլի։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ.—Ժանտախտի դէմ կռիւ մղող յանձնաժողովը հաղորդում է, որ Աստրախանում յուլիսի 19-ին խօլերայով հիւանդացան 4, մեռան 2. Աստրախանի գաւառում հիւանդացան 2, Ցարիցինեան գաւ.—մէկ։ Զայաչի կղզու վրա հիւանդացաւ և մեռաւ մէկը։ Ընդամենը յուլիսի 8-ից Աստրախանի նահանգում հիւանդացել են 34, մեռել են 16։ Սարատովում յուլիսի 18-ին հիւանդութեան երկու դէպք է եղել և նաւերից վերցված են 3 հիւանդ. ընդամենը Սարատովում 7 դէպք է եղել, որոնցից մէկը մահով է վերջացել. գաւառում հիւանդացան 4, մեռան 2. Բալաշեան գաւառում հիւանդացաւ մէկ հոգի։ Միզըռնեան երկաթուղիական հիւանդանոցն է բերված յուլիսի 18-ին խօլերայով հիւանդ մի կին, որը վերցված է Աստրախանից եկած շոգենաւից։ Աստրախանը անբարեյաջող է համարվում խօլերայից։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ.—Ժանտախտի դէմ կռւող յանձնաժողովը հաղորդում է, որ Աստրախանում յուլիսի 20-ին հիւանդացան 2. Աստրախանի գաւառում հիւանդացաւ 1. ընդամենը նահանգում հիւանդութեան սկզբից խօլերայով հիւանդանալու 42 դէպք է եղել, որոնց թւում 19-ը վերջացել է մահով։ Ցարիցինում յուլիսի 18-ին հիւանդացան 22, մեռան 13. գաւառում մեռաւ 1. Սարատովում յուլիսի 19-ին հիւանդանալու 3 դէպք է եղել լաստերի վրա. ընդամենը էպիդէմիայի սկզբից նահանգում հիւանդանալու 28 դէպք է եղել և մահման 44 դէպք։ («Հ. Գ.»)

—

Րօստով Դօնի վրա.—Բանտում ստամոքսի սուր հիւանդանալու երկու դէպք եղաւ և մէկը մահով վերջացաւ. բակտէրիօլօգիական քննութիւնից երևաց, որ ասիական խօլերա է։ («Հ. Գ.»)

—

Նիւ-Եօրկ.—Ֆէյնիի մօտ սկսվեց ահագին անտառային հրդեհ։ Այրվեց արդէն 6 քաղաք։ Սպանվեցին 150 մարդ։ Վնասուածքներ են ստացել հարիւրաւոր մարդիկ. մի քանի հազար մարդիկ անտուն-անտէր են մնացել։ Մասնաւոր անձանց վնասները 5 միլիոնից աւելի են։ («Հ. Գ.»)

—

«Իրաւունք» թերթը հաղորդում է որ թիւրքահայ գրականութեան փայլուն աստղերից մէկը՝ Եղիա Տէմիրճիպաշեան անձնասպան է եղել, կախելով ինքն իրան իր բնակարանի մէջ։

—

Լօնդօն.—«Թայմսը» քննելով Նախագահ Ֆալիէրի ճանապարհորդութիւնը, ասում է, որ տեսակցութիւնը Րեվէլում այնպիսի պարզ և խաղաղ բնաւորութիւն ունէր, որ, ըստ երևոյթին, փարատեց ամեն տեսակ կասկածները ամենակասկածոտ շրջաններում անգամ։ Քննելով Ռուսաստանի առաջադիմութեան համագումարը ռէֆօրմների գործում, լրագիրն ասում է, որ դեռ շատ պակասութիւններ պէտք է հարթվեն, բայց զարմանալին այն է, որ նկատելի առաջադիմութիւն եղաւ այդքան կարճ ժամանակում։ Ռուսները փորձեցին երեք տարում անել այն, ինչ որ անգլիացիներից խլեց մի քանի դար։ («Հ. Գ.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Թէհրան, 19 յուլիսի

Մի խումբ պարսիկներ, թւով մօտ 150, բաստ նստեցին թիւրքական դեսպանութեան ամառային շինութեան մէջ, խնդրելով, որ դեսպանը միջնորդէ շահի առաջ պահպանելու սահմանադրութիւնը Պարսկաստանում։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 19 յուլիսի

Յուլիսի 18-ի երեկոյեան զինված ֆէդայիներ կալանաւորեցին և տարան Սալթմար-խանի մօտ պարսկական հեռագրատան կայարանի կառավարչին։ Այդ կալանաւորութիւնը կապում են այն մեղադրանքի հետ, որ նա Թէհրան ուղարկած իր զեկուցումների մէջ բաց է արել յեղափոխականների գործունէութիւնը։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ 20 յուլիսի, (Ջուլ. վրայով)

Յուլիսի 19-ին և 20-ին տեղի ունէր հատ-հատ հրացանաձգութիւն։ Յուլիսի 20-ի առաւօտեան, հեռագրաթելը ուղղելուց յետոյ, յեղափոխականները նորից կտրեցին բոլոր հեռագրաթելերը դէպի Ռուսաստան և Թէհրան։ («Հ. Գ.»)

—

Պարսկական դիկտատոր

Թէհրանից «Times»-ին հաղորդում են, որ Պարսկաստանի իսկական դիկտատորը յայտնվում է, որ էմիր Բահադուրն է, որ մեծ ազդեցութիւն ունի շահի վրա։

Այդ դիկտատորի խորհրդով նոր մէջլիսի գումարումը յետաձգված է անորոշ ժամանակով։ Մինչ այդ էմիր Բահադուրը մտադիր է պետական յեղաշրջում պատրաստել և վերականգնել բռնապետական կառավարչական ձևը։ Նա հաւատացնում է, որ բոլոր նահանգապետները խնդրում են վերացնել սահմանադրութիւնը։ Չափաւոր տարրերը զգուշացնում են շահին չը հաւատալ այդ ժամանակաւոր խաղաղութեանը և չը վստահանալ էմիր Բահադուրին, որի ռեպրեսիաները կարող են շատ կործանարար ազդեցութիւն ունենալ երկրի վրա։

Հակառակ բոլոր զգուշացումներին, սակայն, շահի կուսակցութիւնը շտապում է նոր հիմնական օրէնքներ մշակել, նոր այնպիսի դատավարութիւն հաստատել, որը համապատասխան լինի բռնապետական կարգերին, և քննութեան առնել ֆինանսական ու զինուորական ռէֆօրմներ։

Շահի բանակը ամեն օր նոր հեծելազօրքեր են գալիս։ Բնակիչները վախենում են կողոպուտները վերսկսվելուց։ («Слово»)

—

Թաւրիզ, 17 յուլիսի

Տուածս վերջին տեղեկութիւնները մինչև ամսիս 12-ն էր։ Դրանից յետոյ կռիւը շարունակվեց թնդանօթներով և հրացանաձգութեամբ մինչև ամսիս 15-ը։ Հատ-հատ հրացանաձգութեան ենթարկվեցին և հայոց տները։ Թնդանօթի մի հարուած էլ ստացաւ մի հայ տուն, ուր գնդակը թաղվեց սենեակի պատի մէջ. բարեբաղդաբար մարդիկ չեն վնասվել։ 14-ին թնդանօթի մի ռումբ պայթեց անգլիական բանկի նոր կառուցվող շինութեան կտուրին շատ մօտիկ. ռումբի կտորները մօտ երկու լիտրաչափ հաւաքելով բանկի կառավարիչը՝ մի խնդրագրով ներկայացրեց անգլիական փոխ-հիւպատոսին. վերջինս անմիջապէս իրողութիւնը հեռագրեց Թէհրան։ 14-ին մի խումբ վաճառականներ առանձին-առանձին խնդրագրերով դիմեցին տեղիս հիւպատոսներին, խնդրելով որ հիւպատոսական ժողով կայացնեն իրերի դրութեան մասին մտածելու և հաշտութիւն կայացնելու համար։ Նոյն օրը մի նամակով խնդրել էին և հայոց թեմակալ առաջնորդին, որ նա էլ ներկայ լինի ժողովներին։ Հայր Թեմակալը հաճութեամբ իր համաձայնութիւնը տուեց։

14-ի երեկոյեան հիւպատոսական ժողով կայացաւ ռուսաց հիւպատոսարանում. բացակայ էր միայն ամերիկականը, որն առարկել էր, թէ առանց ամերիկական կառավարութեան թոյլտուութեան չէ կարող որևէ ժողովի ներկայ լինել. սպասում է հրահանգի։ Հիւպատոսական ժողովն էլ որոշեց իրանց կառավարութեանց հրահանգներին սպասել։

15-ին, բոլորովին անսպասելի, հայոց առաջնորդը երկու նամակ է ստանում. մէկը փոխ-կառավարչապետի՝ Րահիմ-խանի և Սուջայի-Նիզամի ստորագրութիւններով, միւսը՝ Իսլամիէ անջումանի կողմից Իսլամիէի կնիքով։ Երկուսի էլ բովանդակութիւնը համարեա նոյնն էր. Իսլամիէինը մի քիչ աւելի խիստ։ Նամակով յայտնում են, որ հայ ժողովուրդը մինչև օրս՝ դարերի ընթացքում՝ վայելել է պարսից կառավարութեան հովանաւորութիւնը և շնորհները և ներկայումս էլ հայ ժողովրդի պաշտպանները և բարեացակամները—կառավարութիւնն ու հոգևորականութիւնը—նրանք են։ «Ներկայ քաղաքական խառնակ ժամին մենք տեսնում ենք, որ հայ ժողովուրդն իր թաղերում պատսպարում և տեղ է տալիս կառավարութեան թշնամիներին և խառնակիչներին. կառավարութիւնը ստիպված է այդպիսիներին հետապնդել նոյնիսկ հայ թաղերում, որի ժամանակ կարող է տուժել հայ ժողովուրդը. այդ մասին յայտնելով ձեզ, առաջարկում ենք հեռացնել հայոց թաղերից ապաստանած թուրք ժողովրդին»։

Հայր Թեմակալը, նկատի ունենալով որ վերոգրեալ նամակներից պրովօկատորական հոտ է բուրում, անմիջապէս թէ ստացած նամակների համառօտ բովանդակութիւնը և թէ իր տալիք պատասխանները հեռագրեց Թէհրան Պարսկա-Հնդկաստանի թեմակալ Սահակ արքեպիսկոպոսին՝ ուր անկ է յայտնելու և պէտք եղած միջոցները ձեռք առնելու համար, իսկ երեկ առաւօտեան ուղարկեց թէ Իսլամիէին և թէ փոխ-կառավարչապետին պատասխան նամակներ։

Հայր Թեմակալը յայտնում է կառավարութեան ներկայացուցչին, որ «հայ ժողովուրդը դարեր շարունակ վայելելով Իրանի վեհապետների առանձին խնամքն և պաշտպանութիւնը, ինքն ևս իր ովսանին չէ թերացել հաւատարմական և անձնուիրութեան արտայայտութիւններով երախտահատոյց լինել։ Ներկայ սրտայոյզ և աղետալի հանգամանքներում էլ մենք չը թերացանք մեր պարտականութեանց մէջ և քանիցս մեր և մեր ժողովրդի ծառայութիւնն առաջարկեցինք թէ կառավարութեան և թէ բարձր հոգևորականութեան չը հանդուրժելով այն իրականութեան առաջ, որին ենթարկված են մեր սիրելի հայրենիքը և մեր թշուառ հայրենակիցները։ Մեր դիմումները մնացին անպատասխան…։ Եւ մենք մասամբ մխիթարված էինք համարում մեզ, երբ մեզ դիմող մեր թշուառ հայրենակիցների ընտանիքներին կարողանում էինք պատսպարան տալ հայ թաղերում մեր հայրենակցական պարտականութիւնը կատարած լինելով։

Զէ որ Իսլամի 225 մարգարէի հրամանն է չը սեղմնչել հիւրասիրութեան դէմ և դըռները լայն բանալ ամեն մի հիւրի առաջ ինչ ազգի և դաւանանքի էլ պատկանելիս լինի. մեր վարմունքով մենք կատարել ենք մեր մարդասիրական պարտականութիւնը և ծառայել ենք հայրենիքի շահերին՝ տեղ տալով միմիայն կառավարական պաշտօնեաների, վաճառականների, արհեստաւոր դասակարգի և առհասարակ այն ընտանիքներին, որոնք ապահով չեն եղել իրանց Թաղերում օր ու գիշեր տեղացող հրացանների և Թնդանօթների գնդակների տարափի տակ. կասկածելի անձնաւորութիւններ չը կան հայ Թաղերում. այդ մասին պատիւ ունեմ միամտացնել ձեզ»: Իսլամիէի կողմից, հայր առաջնորդի գրածը առանձին պէս, Միր-Հաշիմը շտապում է պատասխանել մի շատ քաղաքավարի և սիրալիր նամակով, յայտնելով որ ինքը մի քանի օր հիւանդ է եղել, անձամբ գնալ չէ կարողացել, համաձայն է առաջնորդի նամակի բովանդակութեան ամեն կէտերին և գալիս է իր շնորհակալութիւնը յայտնելու հայերի խիստ պատուաբեր վարմունքի համար, խնդրելով միաժամանակ որ այսուհետև էլ աշխատենք կասկածելի անձնաւորութիւններին տեղ չը տալ, և յուսադրում է, որ շուտով խաղաղութիւնը կը վերականգնի քաղաքում:

Այս նամակը կարծեք ուզում է մեղմացնել առաջինի բովանդակութիւնը, որը, ինչպէս երևում է, գրված է եղել առանց Միր-Հաշիմի գիտութեան:

Հայր Թեմակալը Թէ իր ստացած նամակները և Թէ պատասխանները ռուսերէն Թարգմանելով մի առանձին գրութեամբ ուղարկեց ռուսաց հիւպատոս պ. Պօխիտօնովին, վերջինիս օգնութեամբ պրօվօկատօրական ոտնձգութիւնների առաջը առնելու համար...

Ցոյս ունենք, որ պ. հիւպատոսը, որի մարդասիրական զգացումները անծանօթ չեն մեզ, կաշխատէ պրօվօկատօրական սադրանքը իրանց օրօրանում խեղդել և Թոյլ չը տալ տարածվելու, որից վնասը այնքան է ամեն մի ժողովրդի համար... Թէ ինչեր է կատարվում Թաւրիզում, դժուար է մանրամասն նկարագրել, նամանաւանդ որ «Մշակի» ամբողջ մի համարում չէ կարելի միօրեայ դէպքերն իսկ ամփոփել. այնքան շատ են դրանք և այնքան բազմազան:

Իբօ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1876 Թւի դեկտեմբերի 23-ի Թիւրքական սահմանադրութեան ամենից էական յօդուածները, որի հիման վրա այժմ կը կատարվին ընտրութիւնները Թիւրքական պարլամենտում, հետևեալներն են.

Օսմանեան կայսրութեան անբաժանելիութիւնը: Սուլթանը, որպէս ծայրագոյն խալիֆ և տէր օսմանեան բոլոր հպատակների վրա, պատասխանատուութեան ենթակայ չէ և անձեռնմխելի է, նրա առանձնաշնորհութիւնները նոյնն են, ինչ որ ունեն Արևմուտքի սահմանադրական պետութիւնները: Հպատակների անձնական ազատութիւնը ապահովվում է օրէնքներով: Սուլթանի հպատակները անուանվում են օսմաններ: Պետական կրօնը իսլամն է, բայց խղճի ազատութիւն է Թոյլատրվում և բոլոր այլ օրէնքով ճանաչված դաւանութիւններին. սահմանադրութեան մէջ չը կան ցուցմունքներ պետական հիմնարկութիւնների աստուածպետական բնաւորութեան վրա: Ապա յայտարարվում է՝ մամուլի, ժողովների ազատութիւն: Բոլոր հպատակները իրաւունք ունեն խնդրագրերով դիմել պարլամենտին. ամենքը հաւասար իրաւունք ունեն օրէնքի առաջ. Բոլոր օսմանները առանց կրօնի խտրութեան իրաւունք ունեն մտնել պետական ծառայութիւն: Բոլոր հարկերը պէտք է հաւասար կերպով բաժանվեն: Մինիստրների խորհուրդը նիստեր պէտք է ունենայ մեծ վէզիրի նախագահութեամբ. Իւրաքանչիւր մինիստր պատասխանատու է միայն այն բանի համար, ինչ որ կատարվում է իր իրաւասութեան ներքոյ գտնվող վարչութեան սահմաններում: Պատգամաւորների ժողովը կարող է պահանջել, որ դատի ենթարկվեն մինիստրները: Հիմնվում է բարձրագոյն դատարան մինիստրներին մեղադրող գործերը քննելու համար: Այն դէպքում, երբ նշանաւոր հարցի առիթով պատգամաւորների ժողովը քուէարկում է պախարակումն մինիստրութեան, սուլթանը նոր մինիստրներ է նշանակում կամ արձակում է պատգամաւորների ժողովը: Մինիստրները կարող են ներկայ լինել երկու պալատների նիստերին և խօսել այնտեղ. նրանց կարող են հարցապնդումներ անել: Պաշտօնեաները իրանց ապօրէն գործողութիւնների համար պատասխանատուութիւնից չեն ազատվում նրանով, երբ ասում են Թէ իրանք վարվել են համաձայն իրանց իշխանութիւններից ստացած հրամանագրերի: Ազգային ժողովը բաղկացած է երկու պալատներից—սենատից և պատգամաւորների ժողովից, որոնք գումարվում են իւրաքանչիւր տարի նոյեմբերի 1-ին: Նրանց նստաշրջանները շարունակվում են չորս ամիս: Նրանք բացվում են սուլթանի հրովարտակով ուղղված երկու պալատներին: Երկու պալատների անդամները ազատ են իրանց ձայնատուութեան և իրանց կարծիքները յայտնելու մէջ: Հրամայողական մանդատներ Թոյլատրելի չեն: Օրէնսդրական նախաձեռնութիւնը պատկանում է մինիստրութեան, բայց պալատները կարող են ընդունել ցանկութիւններ օրէնսդրական միջոցներ մշակելու մասին: Նախագծերը առաջ ներկայացվում են պատգամաւորների ժողովին, ապա սենատի քննութեանը, իսկ դրանից յետոյ սուլթանի հաւանութեանը: 100 հազար բնակչից ընտրվում է մի պատգամաւոր: Ձայնատուութիւնը գաղտնի է: Պատգամաւորները չեն կարող պաշտօններ ունենալ պետական ծառայութեան մէջ: Պատգամաւորների ընտրութիւնները կատարվում են չորս տարին մի անգամ: Պատգամաւորների ժողովի արձակման դէպքում նոր ընտրութիւններ են նշանակվում և նոր պատգամաւորների ժողովը գումարվում է արձակման օրից վեց ամիս յետոյ: Պատգամաւորների ժողովի նիստերը հրապարակական են: Նստաշրջանի ընթացքում պատգամաւորները, առանց պատգամաւորների ժողովի Թոյլտուութեան, չեն կարող ենթարկվել կալանաւորման կամ դատի: Դատաւորները անփոփոխ են: Դատաստանական հիմնարկութիւնների նիստերը հրապարակական են: Ամենքը պարտաւոր են տարրական դպրոցներն այցելել: Հիմնվում է կօնտրօլի պալատ պետական ֆինանսների վրա հսկելու համար: Այդ պալատի անդամները անփոփոխելի են և պարտաւոր են իւրաքանչիւր տարվայ վերջը հաշիւ ներկայացնել պատգամաւորների ժողովին ֆինանսների դրութեան մասին: Սահմանադրութիւնը կարող է փոփոխութեան ենթարկվել միայն երկու պալատների որոշմամբ և սուլթանի հաւանութեամբ:

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

«Die Zeit.»-ը Թիւրքիայում սահմանադրութեան վերականգման օրը պատմական օր է համարում ոչ միայն օսմանեան կայսրութեան համար, այլ և ամբողջ Եւրոպայի համար:

Ուրիշ երկիրների նման Թիւրքիան ևս կրկին սահմանադրութիւն ստացաւ շնորհիւ միայն յեղափոխութեան: Թէ որքան լաւ էր Թիւրքական յեղափոխութիւնը նախապատրաստված, ամենից լաւ երևում է նրա աջողութիւնից: Քաղաքացիական յեղափոխութիւնը կարող էր հեշտ ճնշվել, սակայն Թիւրքական յեղափոխութեանն առաջնորդում էր հենց զօրքը, որը պարտաւոր էր յեղափոխական բռնկումների ճնշման զէնք ծառայել: Զինուորական յեղափոխութիւնը ճնշել բաւական դժուար գործ է, Թէպէտև սուլթանը անաջող փորձ արեց, այն է՝ ուղարկեց ասպատակների դէմ փոքր-ասիական զօրքերը:

Զօրքը և ժողովուրդը եղբայրական կապերով կապված են զգում այժմ իրանց, որովհետև շարժման ամենաբնորոշ կողմն այն է, որ նա շատ բարձր հայրենասիրական է: Երիտասարդ Թիւրքերը նացիօնալիստներ են և նրանք իրանց խիստ բողոքներով օտար միջամտութեան դէմ ձեռք բերին ժողովրդականութեան մեծ մասը, և օտար միջամտութեանը դիմադրելու համար դժուար էր աւելի լաւ միջոց հնարել, քան սահմանադրութեան շնորհումը: Մակեդոնիայում բարենորոգումներ մտցնելու հարցը այժմ նոր հողի վրա է դրվում: Սահմանադրութիւնը մտցնելուց յետոյ բարենորոգումների բոլոր օտար պլանները անհնարին և աւելորդ են դառնում, որովհետև այն պետութիւնը, որի վարչութեանը մասնակցում է ժողովուրդը, ետ է մղում որևէ օտար միջամտութիւն, և եթէ սահմանադրութիւնը յիրաւի կեանքի մէջ կը մտցվի, այն ժամանակ առհասարակ դիպլօմատների միջամտութեան վախճանն էլ կը հասնի:

«Հիւանդ մարդը» կարող է առողջանալ: Վերականգնված սահմանադրութիւնը Թիւրքաց կայսրութեան ազգաբնակութեանը ոչ միայն magna charta է, այլ և եւրոպական Թիւրքիայի ապագայ գոյութեան միակ երաշխաւորութիւնը:

«Neue Freie Presse»-ն ասում է, Թէ Աբդիւլ-Համիդը, որը այնքան խանդոտ է դէպի իշխանութիւնը, որ մեծ վէզիրի նշանակութիւնը զրոյի և դատարկ ձևականութեան հասցրեց, սահմանադրական միապետ է: Առաջ Թիւրքաց քաղաքականութիւնը կենտրոնացած էր պալատում և Բարձրագոյն Դրան մէջ. Սուլթան Աբդիւլ-Համիդը ինքը դարձաւ իր մինիստրը և խլեց Բ. Դրնից նրա նախկին ամբողջ նշանակութիւնը: Եւ այդ ոչ ոքին չը հաւատացող, ամենաաշխատասէր և նենգամիտ սուլթաններից մէկը որոշել է իր վճիռները ենթարկել պարլամենտի մեծամասնութեան կամքին: Կասկածը և յոռետեսութիւնը շատ տեղին կը լինէին, եթէ սուլթանը իսկապէս չանէր միայն այն, ինչ որ ստիպված էր անել: Est modus in rebus բոլորի համար և սուլթանի համար: Ի՞նչ գիտէր և գիտէ Եւրոպան մահմեդականների արտաքին կեանքի մասին:

Կազմում էին կապոյտ գրքեր, դեղին գրքեր և սպիտակ գրքեր, և հաշւեցէք Թէ որքան յայտագրեր կային դրանց մէջ երիտասարդ-Թիւրքերի մասին: Ոչ մէկը: Դիպլօմատների համար գոյութիւն չունէին երիտասարդ-Թիւրքերը. և նրանք եկան ու ամեն բան տակն ու վրա արին—Միւրցշտէգը և Րեվելը, դիպլօմատների և սուլթանի ցանկերը:

Ցիշելով Թիւրքական սահմանադրութեան պատմութիւնը, լրագիրը նկատում է, որ հէնց Սաիդ-փաշան, որը վերականգնեց սահմանադրութիւնը, 1877 Թւի սահմանադրութեան և Միդհատ-փաշայի կործման գլխաւոր պատճառն էր: Եւ եթէ սահմանադրութեան դագաղ շինողը կրկին նրան կեանքի հրաւիրեց, կը նշանակէ ուրիշ ելք չը կար: Մեռած Միդհատը յաղթութիւն տարաւ իր ստեղծագործութեան մէջ և յաղթեց Թէ սուլթանին և Թէ իր Թշնամի Սաիդին:

Թիւրք ժողովուրդը այժմ փորձ է անում իր սեփական ձեռքն առնել իր վիճակը և իր սեփական ույժերին հաւատալու ընդունակութիւնը պատիւ կը բերէ մահմեդականներին, մինչև անգամ եթէ սուլթանը նորից խաբէ ժողովրդի յոյսերը: Դուռը բացվեց: Ոչ ոք չը գիտէ Թէ ով է տանում նա: Երևան եկաւ նոր փաստը, որը ոչընչացրեց Միւրցշտէգը և Րեվելը: Եւ ոչ ոք դրանից բան չը կորցրեց:

«Times» լրագիրը գրում է, որ սուլթանը շնորհեց սահմանադրութիւնը ոչ bona fide. Կայուն չէ կարելի համարել այն սահմանադրութիւնը, որը զինուորական յեղափոխութեան արդիւնք է: Երիտասարդ-Թիւրքերը հազիւ Թէ կարողանան յոյս դնել զօրքի աջակցութեան վրա ռէֆօրմներ մտցնելու ժամանակ:

Ցատուկ պատասխանատուութիւնն ընկնում է այժմ սահմանակից պետութիւնների վրա, և ճգնաժամից օգտվելու որևէ փորձը ամբողջ Եւրոպայի դիմադրութեանը կը հանդիպէ:

Թիւրքիան իրաւունք ունի պահանջել, որ իրան առ այժմ հանգիստ Թողնեն: Բայց գլխաւոր վտանգը սահմանադրութեան սպառնում է, ի հարկէ, ոչ դրսից, այլ ներսից, և երիտասարդ-Թիւրքերը պարտաւոր են յիշել, որ նոյն ձեռքը մի անգամ արդէն տուեց սահմանադրութիւնը, որպէսզի իսկոյն յետ առնէ:

«Le Temps»-ը գրում է. «Ասում են, որ սուլթանը եթէ հրաւիրէ էլ պատգամաւորների ժողովը, այդ միայն նրա համար կը լինի, որ իսկոյն արձակէ նրան: Սակայն դա կարող է միայն յետաձգել դժուարութիւնները, որովհետև ապստամբները տրամադիր չեն բաւականանալ դատարկ խօսքերով: Մի շարք այլ ինքնակալութիւններից յետոյ, ազատութեան բռնկումը ցնցեց և Թիւրքիան: Արդեօք դա արԹնութեան նշան կը լինի Թիւրքաց ցեղի համար: Շատ կանուխ է լուծել այդ հարցը: Բայց դեռ երբեք աւելի պայծառ պրոբլէմ դրված չէ եղել Հին-Արևելքի առջև»:

«Kölniche Zeitung»-ը նկատելով որ սահմանադրութեան վերականգնումը մի քայլ էր, որ սուլթանը արեց հանգամանքներից ստիպված, այնուամենայնիւ յոյս է յայտնում, որ զօրքը այժմ կը հանգստանայ, և երկրում կը Թագաւորեն կարգը և խաղաղութիւնը:

Կարելի է կասկածել այն բանում, Թէ արդեօք իրաւացի են երիտասարդ Թիւրք օֆիցերները այնպէս ահագին նշանակութիւն տալիս սահմանադրութեանը՝ կարծելով որ սահմանադրութիւնը հաւասարազօր է արդարութեանը և կարգին: Այդ բանը ապացուցանում են Ռուսաստանի և Պարսկաստանի օրինակները: Մենք Թիւրքաց նոր սահմանադրութեան համար աւելի լաւ վիճակ ենք ցանկանում, քան այն, որ ունէր Միդհատի սահմանադրութիւնը: Կ. Պօլսում պէտք է պարզ հասկանան, որ միմիայն սահմանադրութիւն տալը դեռ բաւական չէ դժգոհութեան և ապստամբութիւնների առաջն առնելու համար ապագայում: Դրա համար հարկաւոր է յիրաւի վերացնել այն զեղծումները, որ հասցնում են զօրքը ապստամբութեան:

Սուլթանի գործը կարող են Թեթևացնել և պետութիւնները, որոնք պէտք է հասկանան, որ նրանց քաղաքականութիւնը մինչև այժմ սխալ էր: Երիտասարդ Թիւրքերի ապստամբութիւնը նախազգուշացումն է Եւրոպայի համար, որ չէ կարելի անտես առնել ազգային զգացմունքները և որ այդպիսի քաղաքականութիւնը կրակի հետ խաղալ կը նշանակէր:

«Vossische Zeitung» ասում է, Թէ սահմանադրութիւնը միմիայն ֆօրմուլա է, որը կարիք ունի հոգևոր բովանդակութեան: Միմիայն երբ յայտնի կը դառնայ ձեւ բովանդակութիւնը, կարելի կը լինի նրա նշանակութիւնը հասկանալ Թիւրքաց պետութեան համար: Ներկայ վայրկեանում սուլթանը հրովարտակ է տուել միմիայն ապստամբներից վախենալով: Կարելի է մատնացոյց անել, որ շատ քիչ պետութիւններում է այնպէս հարթ անցել Թռիչքը միապետութիւնից դէպի սահմանադրութիւն այդպէս աննշան արիւնհեղութեամբ: Նշանաւոր նշան պէտք է համարել և այն, որ ապստամբները մեծ խնամքով պահպանում էին կարգը: Նրանք ջենտլմէնի պէս անցկացրին յեղափոխութիւնը:

Եւրոպան պէտք է գործ ունենայ ոչ Թէ սուլթանի, այլ Թիւրք ժողովրդի հետ: Շարժման պարագլուխները, ինչպէս երևում է, իրանց մէջ ույժ են զգում ոչնչացնելու հրոսակախմբերը, մի գործ, որի առաջ անզօր գտնվեցին բոլոր պետութիւնները: Թող Միւրցշտէգը, Րեվելը և այն բոլորը, ինչ դրանց հետ կապված է, անցեալի սեփականութիւն դառնան, և այն ժամանակ ոչ միայն Թիւրքիան, այլև Եւրոպան Թեթևութեամբ շունչ կառնէ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Աստրախանում խօլերա է յայտնվել և որ նա կարող է Անդրկովկաս փոխադրվել, առաջարկում եմ պրիստաւներին ամեն միջոց ձեռք առնել քաղաքը մաքրելու, և հսկել, որ բոլոր բնակիչները ճշտութեամբ կատարեն քաղաքային դումայի պարտադիր որոշումները սանիտարական մասի վերաբերեալ, որ հետևեալներն են.

1) Պրիստաւները պարտաւոր են գործակցել քաղաքային սանիտարական մարմնի ծառայողներին, Թաղական վերահսկիչներ նշանակել սանիտարական խմբերի մէջ աշխատելու համար:

2) Ցայտնել Թաղական հոգաբարձուների խորհրդի նախագահ Ա. Ս. Գուլաձէին այն տների ու առևտրական հաստատութիւնների մասին, որոնք իրանց հակասանիտարական դրութեան շնորհիւ պէտք է անմիջական քննութեան ենթարկվեն:

3) Պահանջել, որ Կուր գետի ափերը անմիջապէս մաքրվեն աղբից ու ցեխից, արգելել կամուրջներից աղբ և անմաքրութիւններ Կուրը Թափելը, կրաջուր լցնել աղբանոցները և կեղտոտ ջրերի դուրս Թափվող տեղերը: Դրանց վրա հսկելու պարտաւորութիւնը դնել Թաղական վերահսկիչների, պահակ ոստիկանների և դէպի Կուրը դուրս եկող տների դվօրնիկների վրա:

Րօտմիստր Սօրօլևսկուն եմ յանձնարարում շրջել Կուրի երկու ափերն էլ Կուրի հոսանքով մինչև քաղաքի սահմանները՝ և պահանջել, որ անմիջապէս մաքրվեն:

4) Մաքրել զանազան աղտոտութիւններից բոլոր ձորերը: Դրանց հսկողութիւնն էլ րօտմիստր Սօրօլևսկուն եմ յանձնում:

5) Սայլեր կանգնելու բիրժաներում, 10-րդ քաղաքամասի շրջանում, յանձնարարում եմ պրիստաւ Լեվանովին պահանջել կառապանների աւագներից, որ սայլեր կանգնելու տեղը ամեն օր մաքրեն և կրաջուր սրսկեն: Նոյնը անել և կառքերի կանգնած տեղերը:

6) Արգելել տրակտիրներ ու ճաշարաններ պահողներին աղբ և կեղտոտ ջուր Թափել քաղաքի կանալիզացիայի փոսերի վրա դրված ցանցերին: Դրանց համար անհրաժեշտ է, որ տներում յատուկ կոնքեր (раковина) շինված լինեն:

7) Հսկել, որ Դիդուբէի առւում ջուրը չը կանգնի և որ այնտեղ կուտակված ամբողջ տիղմը մաքրվի:

8) Եօթերորդ քաղաքամասի պրիստաւին յանձնարարում եմ բժշկի հետ քննել սպանդանոցին մօտ գետի ափերը և զառիվայր տեղերը:

9) Ամեն առաւօտ պրիստաւները, նրանց օգնականներն ու Թաղական վերահսկիչները պարտաւոր են շրջել շուկաները, բազարները և առևտրական այն շարքերը, ուր մրգեր և մթերքներ են վաճառվում: Բոլոր փտած ու փչացած մթերքներն ու մրգերը անմիջապէս ոչնչացնել, վրան նաւթ ածելով:

10) Նոյնպէս շրջել բակերը և պահանջել, որ անմիջապէս և լաւ մաքրվեն բակերը, արտաքնոցները, կեղտոտ ջրերի փոսերը, աղբանոցները, և բոլոր տեղերը դեզինֆեկցիայի հեղուկներ ածել:

11) Հնարաւոր եղածին չափ խստութեամբ հսկել, որ քաղաքում և ձորերի մէջ չը դատարկեն արտաքնոցներից աղբով լի տարվող տակառները, այլ որ նրանք քաղաքից դուրս տարվեն՝ յատուկ որոշված տեղերը:

12) Քննութեան ենթարկել խոհանոցների ամանեղէնները հիւրանոցներում, ռեստօրաններում, տրակտիրներում և ճաշարաններում ու պահանջել, որ կատարելապէս մաքուր պահվեն դրանց Թէ բնակարանները, Թէ սպիտակեղէնը և Թէ ամանները: Պղնձէ ամանները պէտք է կլայեկված լինեն:

Պահանջել, որ խանութներում և բազարում միսը, միրգը, պտուղներն ու զանազան քաղցրաւենիքները ծածկված լինեն մաքուր ծածկոցներով, շինված Թանզիֆից, կտաւից կամ մաքուր Թղթից:

14) Ցայտարարել խանութպաններին և դվօրնիկներին, որ անհրաժեշտ է նախազգուշական միջոցներ ձեռք առնել և ամեն տեղ կատարեալ մաքրութիւն պահպանել:

15) Արգելել խոզերին իրանց բներից դուրս արձակելը դէպի փողոցներն ու դէպի Կուրի ափերը. բոլոր Թափառող խոզերին բռնել և տանել մօտակայ զօրանոցները, բարեգործական հաստատութիւններն ու բանտերը՝ ուտելու համար:

Թիֆլիսի բնակչութեան առողջութիւնը պահպանելու և խօլերայից նախազգուշացնելու գործում իմ վերահսկողութեանը յանձնված ոստիկանութեան ծառայողները պարտաւոր են ցոյց տալ մեծ եռանդ ջանասիրութիւն, պահանջելով որ բոլորն էլ ճշտութեամբ կատարեն սանիտարական-ոստիկանական կարգադրութիւնները:

Ջանցաւորների և պարտազանցների մասին կազմել արձանագրութիւն և յանձնել ինձ, ադմինիստրատիվ պատասխանատուութեան ենթարկելու համար, համաձայն պատժական օրէնսգրքի 25-րդ յօդուածի, որ վճռում է հաշտարար դատաւորը, և որը դուրս է հանված ընդհանուր օրէնսդրական կարգից:

Իսկ ոստիկանական ծառայողները, որոնց կը նկատեմ, որ մակերեսօրէն ու անփոյթ կերպով են վերաբերվում բնակչութեան առողջութիւնը պահպանելու գործում, կարտաքսվեն պաշտօնից:

Ստորագրեց. ոստիկանապետի պաշտօնակատար՝ գնդապետ Ցիխոցկի:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Իգդիրից մեզ հեռագրում են յուլ. 20-ին. «Այստեղ կատարվեց պատուիրակների ընտրութիւն՝ կաթողիկոսական ընտրութեան առիթով: Իգդիրի շրջանի կողմից քուէարկվեցին պ. պ. Աւետիս Ահարոնեան, Արտաշեանց, Խաչատուր Կանայեանց և Սուսանեանց: Պատուիրակներ ընտրվեցին վերջին երկուսը, այն է Կանայեանց և Սուսանեանց, իսկ առաջին երկուսը սևացան»:

Տէր-Մինասեան

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Թիւրքահայ եպիսկոպոս մի անձի յունիսի 30-ից ինձ ուղղած նամակից արտագրելով, ուղարկում եմ «Մշակի» մէջ ի գիտութիւն ընթերցողների հրատարակելու հետևեալ գիտողութիւնը Դուրեան Եղիշէ եպիսկոպոսի մի առաքելութեան մասին, որ Աշգեան պատրիարքի յանձնարարութեամբ կատարած էր նա: Քանի որ Թիւրքահայի կացութեան պայմանները հնարաւոր ազատութիւնը չեն ընձեռնում մամուլի մէջ ազատ հրապարակ ելնելու, հարկադրված պիտի սոյն զիգզագներով լսելի անել տանք նրանց կարծիքները:

«Օրմանեանի տեղ Դուրեանի Թեկնածութեան աջողութիւնը փափագելի է բաւ ամենայնի: Դուրեան կերևի ամբաստանուած է՝ «Աշգեանի կողմից վատ դերով արտասահման ուղևորուելու և քարոզներ տալու» գրպարտութեամբ: Ստոյգ է որ Դուրեան Աշգեանի կողմէն 1888—89-ին արտասահման ղրկուեցաւ համոզելու յեղափոխականները, որպէսզի իրենց «անխոհեմ ընթացքով» երկրի ժողովուրդը նորանոր դժբաղդութիւններու չենթարկեն: Դուրեան ուղևորեցաւ. իր միսիոնը սխալ ըմբռնեցաւ յեղափոխականներու կողմէն, որոնք տեղ-տեղ աննպաստ ցոյցեր ըրին իրեն դէմ, առանց զինքը խորապէս կարենալ հասկնալու: Զինքը ղրկողներուն նպատակը կրնար տարբեր եղած ըլլալ. բայց Դուրեան ապագայի լուրջ հեռատեսութեամբ մը դէմ խօսեցաւ ոչ Թէ հայկական շարժումին, այլ այն անխոհեմ գործիչներուն, որոնք անգոյ ծրագիրներ կը հրատարակէին և կարգ մը ոչնչաբանութիւններով Թիւրքին մոլեռանդութիւնը և արիւնի ծարաւը կը գրգռէին անզէն և անպաշտպան հայերուն դէմ: Դուրեան հայկական դատին և կամ յեղափոխութեան աննպաստ քարոզ չէ խօսեցած իր այդ առաքելութեան միջոցին: Ընդհակառակն, ի Ռուսճուգ Թէ ի Վառնա, լաւ չեմ յիշեր տեղը, Վարդանանց տօնին իր խօսած քարոզը Թիւրք գօմիսէրին ուշադրութիւնը գրաւեց և այն ատեն տեղեկագրեց ի Պօլիս Թէ՝ «Եղիշէ վարդապետ Դուրեան, փոխանակ յեղափոխականները զսպելու և յորդորելու յուղղութիւն, իր քարոզութիւններով անոնց հայրենասիրութիւնը կը գրգռէ աւելի»: Գօմիսէրի այս տեղեկագրին վրայ, Բարձրագոյն Դուռը Աշգեանին դիմեց անոր զգացնելու համար կատարուած սխալ ընտրութիւնը և նա կանչելու Դուրեան վարդապետը: Աշգեան այն ատեն միջնադէպը փակեց, յայտարարելով Թէ ինք բացարձակ վստահութիւն ունի Դուրեանի վրայ: Այս պատմութիւնը նոյն ինքը Աշգեան ըրած է ինծի: Եւ երբ Դուրեան Պօլիս դարձաւ, պարտաւոր էր տեղեկագիր մը տալ: Այդ տեղեկագիրը, ի մէջ այլոց, կըսէր. «Տեսնուեցանք արտասահմանի հայերուն հետ. մենք Թէպէտ զիրենք համոզեցինք, որպէսզի հաւատարիմ զգացումներ տածեն օսմ. բարեխնամ կառավարութեան հանդէպ, բայց ես կը մտածեմ Թէ որչափ ատեն հայրենիքի կեղեքումներն ու հարստահարութիւնները չդադրին, անոնք լռելու մտադրութիւն չունին բնաւ: Զանոնք լռեցնելու լաւագոյն և միակ միջոցը բարեկարգութիւնն է բուն երկրին մէջ, և որչափ ատեն այդ փոփոխութիւնը տեղի չունենայ, անոնք իրաւունք ունենալ պիտի Թուի միշտ...»: Այս տեղեկագիրը հիասթափում պատճառեց Աշգեանին և Տատեան Արթին փաշային: Այս վերջինը Դուրեանին իր մօտ կանչեց, խնդրեց, որ տեղեկագիրը կառավարութեան նպաստաւոր ոգով մը պատրաստէ, որպէսզի կարող ըլլան անոր Թարգմանութիւնը ներկայացնել վեհ. սուլթանին, որը անձկանօք կը սպասէ անոր: Իրեն պարգև և պատուանշան խոստացուեցաւ: Բայց Դուրեան այդ ամենուն փոխարէն՝ «Ես խղճիս հակառակ ընթացքի մը մէջ չեմ կրնար գտնուիլ, ինչ որ տեսայ, լսեցի ու զգացի՝ զայն միայն կրնամ գրել, ու գրեցի»: Եւ տրուած տեղեկագիրը այդպիսով մնաց, ու սուլթանը ի զուր սպասեց անոր ընթերցումին:

«Այս պարագաները կարծեմ լաւագոյն

փաստերն են հերքելու համար բոլոր այն զրպարտութիւնները, որոնք կնետուին Դուրեանի նման ազգայնապէս մաքուր և անբիծ ճակատի մը»։

Իմ կարծիքով «Մշակի» ընթերցողները չը պիտի աչքից թողնեն այն հանգամանքը, որ հայ եպիսկոպոս է այս տողերն ուղղում մի այլ հայ եպիսկոպոսի մասին. երկուսն էլ կենդանի են—երկուսն էլ թեկնածուներ հայրապետական գահի։ Այսպիսի պայմաններում, երբ Նախանձի տեղ անոյշ մերկացումն է խօսում, առանձնապէս ուշադրութեան արժանի է հանդիսանում։

Մ. ա.-ք. Մելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Քաղաքային բժշկական-սանիտարական տեսչի ստացած տեղեկութիւնների համաձայն՝ Թիֆլիսում վերջին օրերս զգալի կերպով տարածված է փորացաւ հիւանդութիւնը։

◆ Ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) Արշակ Չօպանեանի բանաստեղծութիւնների ֆրանսերէն թարգմանութիւնը Poémes վերնագրով, Պիէր Քիյարի առաջաբանով, մեծածաւալ մի հատոր, բաղկացած 263 էջերից, հրատարակութիւն «Mercure de Frence» ընկերութեան. գինն է 3 ½ ֆրանկ. 2) Երուանդ վարդապետի «Վերանորոգութեան կարիքը հայոց եկեղեցու համար» բրօշիւրը, Վաղարշապատ, 1908 թ. գինն է 10 կ.։

◆ Ստացանք «Աղբիւր» ամսագրի յուլիսի համարը, որ առաջվայ պէս տպված է չքեղ, լաւ թղթի վրա և պարունակում է զանազան պատկերներ։

◆ Կիրակի, ամսիս 20-ին, Թիֆլիսի հայ սիրողների խումբը լեհական տանը ներկայացրեց «Թագի համար» պիէսը 5 գործողութեամբ։ Ներկայացումից յետոյ տեղի ունեցան պարեր՝ եւրոպական և ասիական, որի ժամանակ նուագում էր Զիւանու խումբը։ Խաղը մասամբ անաջող էր։

◆ Առաջիկայ օգոստոսի 15-ից վերաբացվելու են ժողովրդական համալսարանի գրագիտական դասարանները մեծերի համար։ Վարչութիւնը որոշեց յուլիսի 18-ի ժողովում՝ այժմեանից առաջարկել բոլոր սեկցիաներին. ա) օգոստոսի մէկի համար պատրաստ ունենալ տուն ուսումնարանի համար և աշակերտների կոլեգ իրանց ուսուցիչներով, բ) պատրաստել սիստեմատիկ կուրսերի դասախօսների ցուցակ և գ) աշխատել լրացնելու սեկցիայի պակասորդ անդամների թիւը։ Պ. Ըշխիլաձէն յանձն առաւ կազմելու կիրակնօրեայ հրապարակական դասախօսների ցուցակ։ Վարչութեան կողմից գրաւոր դիմում է եղել Զուբալովի ներկայացուցչին, ժողովրդական տանը կառավարող կոմիսիայում վարչութեան եւ տեղ տալու։ Օսերի սեկցիայի ուսուցիչ Բոմայեվը եւ պահանջ ներկայացրեց վարչութեանը ամառվայ ազատ ամիսներին ռոճիկ ստանալու։ Այդ հարցի լուծումը, անդամների կանոնաւոր թիւ չը լինելու պատճառով, յետաձգվեց հետևեալ ժողովին։

◆ «Ախուրեան» թերթում կարդում ենք հետևեալը. «Պ. Թորամանեան այս ձմեռ ուղարկեց իր աշխատութիւնները, հայկական հին ճարտարապետութեան յատակագծերով և նկարներով, մի հմտալից զեկուցման հետ, Պետերբուրգի գիտութեանց կայսերական ճեմարանին գնահատութեան։ Այժմ այդ գնահատութիւնը եկել է, որից մի ամենակարեւոր կտորը դնում ենք այստեղ. «Գիտութեանց կայսերական ակադեմիան 1908 թ. մայիսի 21-ին, իր պատմաբանասիրական մասնաճիւղի ժողովում, պ. Թորամանեանի աշխատած Անիի հնութիւնների յատակագծերն և նկարները քննելով՝ ճանաչեց դրանց որպէս գիտական և գեղարուեստական մեծարժէք գործ։ Անիի մէջ պ. Թորամանեանի աշխատութեան շարունակութիւնը, ակադեմիայի հայեցակէտով, վերին աստիճան ցանկալի է յօգուտ գիտութեան և արուեստի»։

◆ Թիֆլիսի երկաթուղային կայարանի I և II կարգի բուֆէտի տոմսարդ ծառայողները փոխարինվում են կանանցով, որպէսզի դրանով բուֆէտը ապահովված լինի ծառայողների գործադուլներից և պահանջներից։

◆ Նահանգապետը արդէն հաստատել է «Յառաջ» սպառողական ընկերութեան կանոնադրութիւնը։ Անդամավճարն է 3 րուբլի, իսկ իւրաքանչիւր փայը 10 րուբլի։ Ընկերութիւնը սկսելու է իր գործունէութիւնը սեպտեմբերից։ Անդամ գրվել կարելի է հէնց այժմեանից։ (Միջին փողոց, եղբարք Զիրուխչեանցների խանութում)։

◆ Շուշու ռէալական դպրոցի դիրեկտոր Ս. Կօզիւլկինը, Փոխարքայի կարգադրութեամբ, հեռացված է պաշտօնից՝ մեղադրվելով օրէնսգրքի 788-րդ յօդուածով, այսինքն՝ «կամ անընդունակ է գտնված իր ստանձնած պաշտօնում, կամ որևէ կերպ անբարեյոյս է և կամ այնօրինակ մեղք է գործել, որը իշխանութեանը յայտնի լինելով՝ միաժամանակ անկարելի է փաստերով ապացուցել»։ Նոյն դպրոցի դիրեկտոր է նշանակվում Նովօրոսսիյսկի գիմնազիայի տեսուչ Ն. Եգօրօվը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

19 յուլիսի

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ։ Յուլիսի 18-ին հանդիսաւոր ճաշին Թագաւորը բաժակաճառ արտասանեց ի պատիւ Նախագահ Ֆալիէրի, Նորվէգիայի անունից իր և Թագուհու ուրախութիւնը յայտնեց այցելութեան առիթով, յիշեցրեց արքայական զոյգի փառաւոր ընդունելութիւնը Ֆրանսիայում, շնորհակալութիւն յայտնեց ներկայ այցելութեան համար և ասաց. «Առաջին անգամն է, որ Նորվէգիացիները առիթ ունեն դիմաւորելու ֆրանսիական հանրապետութեան Նախագահին. յոյս ունեմ, որ այդ այցելութիւնը աւելի եւ կամրացնէ այսուհետև այն բարի յարաբերութիւնները, որոնք անխախտ գոյութիւն ունէին դարերի ընթացքում երկու ազգերի միջև»։ Ապա Թագաւորը խմեց Նախագահի կենացը։ Նախագահը սրտագին խօսքերով շնորհակալութիւն յայտնեց փառաւոր ընդունելութեան համար և ասաց. «Ես երջանիկ եմ, որ իմ այցելութեամբ նոր առիթ տուի սրտագին համակրութեան զգացմունքները արտայայտելու երկու ժողովուրդներին։ Թող ֆրանսիական հանրապետութեան գլխի այդ առաջին այցելութիւնը Նորվէգիական ժողովրդին ապացուցում եւ նպաստէ անընդհատ բարեկամական յարաբերութիւնների զարգանալուն և ամրանալուն երկու ազգերի միջև»։ Նախագահը խմեց արքայական զոյգի, թագաժառանգ պրինցի և Նորվէգիայի երջանկութեան կենացը։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքերի ժողովը մերժեց լորդերի ժողովի առաջարկած մի շարք ուղղումները գառամեալներին թոշակ տալու օրինագծի վերաբերմամբ, այնպէս որ մի քանի դէպքերում մերժումը պատճառաբանված է նրանով, որ ուղղումները պարունակում են իրանց մէջ ստորին պալատի ֆինանսական արտօնութիւնների խախտումն։ Երբ օրինագիծը վերադարձվեց լորդերի ժողովին, լորդ Լէնսդաուն՝ բողոքեց ստորին պալատի արտօնութիւնների բացատրութեան եղանակի դէմ և առաջարկեց ռէզօլիւցիա բողոքի արտայայտութեամբ, չը պնդելով սակայն ուղղածները ընդունելու վրա։ Ռէզօլիւցիան ընդունվեց 37 ձայնով 23-ի դէմ, ապա լորդերի ժողովը համաձայնվեց, որ մերժվեն իր առաջարկած ուղղումները։ Օրինագիծն ընդունվեց վերջնականապէս։ Երկու պալատների նստաշրջանը փակվեց մինչև սեպտեմբերի 29-ը։

ՊԱՐԻԶ։ Աշխատանքի ընդհանուր կօնֆեդերացիայի քարտուղար Իվէտօ, կօնֆեդերացիայի ազդեցիկ անդամը Բուսկում, յուլիսի 18-ի երեկոյեան կալանաւորվեց Վինիէում տեղի ունեցած դէպքերի հետ կապ ունենալու համար։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ «Կրօնշտադտ» ապրանքատար նաւի մի խումբ զինուորներին, որոնք մեղադրվում էին դաւադրութեան մասնակցելու մէջ, գոյութիւն ունեցող պետական կարգը խորտակելու նպատակով, զինուորական դատարանը դատապարտեց տաժանակիր աշխատանքների զանազան ժամանակամիջոցներով, իսկ մնացած իննն հոգուն բերդարգելութեան։

ԼՕՆԴՕՆ։ Ի պատիւ միջազգային խաղաղութեան կօնգրէսի պատուիրակների տրված ճաշին առաջին մինիստր Ասկվիտ մատնացոյց արեց, որ խաղաղութեան տեսակէտից առանձնապէս շահաւէտ են միջազգային համաձայնութիւնները, այն ինչ դաշնակցութիւնները, ընդհակառակն, յաճախ արգելք են դառնում խաղաղութեան։ Ապա նա շեշտեց փոխադարձ այցելութիւնների շահաւէտութիւնը խաղաղութեան տեսակէտից, որովհետև մեծ նշանակութիւն ունի, երբ ազգերը կարողանում են փոխադարձապէս միմեանց հետ ծանօթանալ։ Լորդ Կօրտնէյ եռանդով բողոքեց այն բանի դէմ, որ իբր թէ Անգլիան թշնամաբար է տրամադրված դէպի Գերմանիան։

ԿԱՐԼՕՎԻՑԻ։ (Խորվատիա)։ Սերբիական եկեղեցական-ազգային ժողովը պատրիարք ընտրեց Զմէյանովիչին, որի համար տրվեց 40 ձայն ժողովի պատուիրակների ընդհանուր 70 ձայնից։

ՎԱՐՇԱՎԱ։ Զինուորական դատարանում քննվեց հինգ անձանց գործը, որոնք մեղադրվում էին զինված դիմադրութեան մէջ, որի ժամանակ սպանվել էր ոստիկանական մի ագէնտ. չորս հոգի դատապարտվեցին կախաղանի, մէկը արդարացաւ։

ՌՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Յուլիսի 18-ին ժամանեց առևտրի մինիստրը, այցելեց բօրսան և լսեց բօրսային մասնաժողովի զեկուցումը նաւահանգստի, առևտրի և արդիւնաբերութեան տեղական կարիքների մասին, որի մէջ մատնացոյց էր արվում երկաթուղային հանգոյցը ընդարձակելու, նաւահանգիստը խորացնելու անհրաժեշտութեան և Վօլգան Դօնի հետ միացնելու ցանկութեան վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգ ժամանեց յապօնական արտաքին գործերի մինիստր կոմս Հօմուրա իր քարտուղարի ուղեկցութեամբ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Սկսվեց հերթական սէյմի գումարված անդամների պատգամաւորական լիազօրութիւնների ստուգումը։ Եկել են 191 պատգամաւոր, որոնց լիազօրութիւնները կանօնաւոր են ճանաչված։ Պրեզիդիումի ընտրութիւնը կը կայանայ յուլիսի 21-ին, տարիքով աւագ պատգամաւոր Խէգրէրգի նախագահութեամբ։

Յուլիսի 21-ին սպասվում է գեներալ-նահանգապետ Բէկմանի վերադարձը, որը աւարտել է իր ճանապարհորդութիւնը Ֆինլանդիայի արևելեան մասում։

ԼՕՆԴՕՆ։ Ռէյտէրի գործակալութեանը հաղորդում են Տօկիօյից, որ օգ. 1-ին բացվում է ուղղակի հաղորդակցութիւն Դալնիի վրայով, հարաւային-մանջուրական երկաթուղով, պօստային շոգենաւերով, որոնք գնում են Շանհայ։

ԿԻԵՎ։ Քաղաքը մի շարք նախապաշտպանողական միջոցներ է ձեռք առնում խօլերայի դէմ։

Հարաւ-արևմտեան երկրից հաղորդում են, որ ամեն տեղ հեղեղներ են եղել, որոնք մեծ վնասներ են հասցրել։

ՊԱՐԻԶ։ Աշխատանքի ընդհանուր կօնֆեդերացիայի փորձը՝ ընդհանուր գործադուլ անել այսօր, որպէս բողոք Վինիէում և Վիլնէվում տեղի ունեցած դէպքերի դէմ՝ կատարեալ անաջողութեան հանդիպեց։ Առաւօտեան լրագիրների մեծ մասը լոյս տեսաւ. քաղաքի գործունէայ կեանքը սովորական բնաւորութիւն ունէր, հող փորողները և որմնադիրները աշխատում էին համարեա լիակատար կազմով։ Քաղաքում շրջում էին պատրուլները։ Վիլնէվում օրը կատարելապէս խաղաղ անցաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. միզաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. ոչքի ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Ռոսսիա»։
(ա. օ.) 100—87

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ընդունում է
Ներքին եւ ջղային
հիւանդութիւն ունեցողներին
Պեատիգօրսկում, Վերևի բուլվար № 14, տ. իշխ. Գիրէյի. Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—28

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 100—91

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ այս յուլիսի 21-ին. ցերեկվայ ժամը 12-ին, կը լինի
ԱՃՈՒՐԴ
Հալաբարի եւ Կուկիայի քաղաքային դաշտերի արօտատեղիները կապալով տալու։
Կապալով տալու պայմանները և ուրիշ տեղեկութիւններ կարելի է ստանալ քաղաքային դումայում։
(չ. ու. կ.) 3—3

ՊԵԱՏԻԳՕՐՍԿԻ
ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
17 դաս շաբաթական (15 դաս ռուսաց լեզու և 2 դաս աշխարհագրութիւն)։ Ցանկալի է ինստիտուտաւարտ։ Պայմանների համար դիմել հոգաբարձու Գ. Սուքիասեանցին։
(օ. մ.) (ապ.) 6—2

ՂԶԼԱՐԻ ՀԱՅՈՑ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ 1908—9
ուսումնական տարում
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
մի աւագ ուսուցիչ, որը աւագութեան և շաբաթական 20 դասի համար ստանալու է ընդամենը 1000 ր., նաև չորս փորձառու ուսուցիչ-ուսուցչուհի—հայոց և ռուսաց լեզուից, թւաբանութիւնից, բնական պատմութիւնից և աշխարհագրութիւնից։ Դասագինը 30-ական րուբլի է։ Դիմողները պէտք է ունենան առնուազն հայոց կամ պետական միջնակարգ դպրոցների աւարտման վկայական։ Ցանկալի է, որ թւաբանութեան և բնախօսութեան ուսուցիչը լինի մասնագէտ գիւղատնտես, որպէսզի բարձր դասարաններում կարողանայ տեսականապէս և փորձնականապէս աւանդել այգեգործութիւն և գինեգործութիւն. այդ դէպքում՝ բացի դասերի համար յատկացրած ռոճիկից՝ կը ստանայ նաև 250 րուբլի։
(հ. շ. ե.) 3—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Ջհանեանցի
Церковная ул. д. № 11. (близъ памятника Ворснцова)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երեւեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այստեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. մ.) 20—7

Լոյս տեսաւ
„ՏԱՍՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ"
Աշխատ. Գէորգ քահանայ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ
ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի, Բագուի, Կարսի և Ալէքսանդրօպօլի գրավաճառներին։
5—3

Մեղրիի երկսեռ դպրոցի համար
հարկաւոր են
ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
հայոց լեզուի և հայերէն դասաւանդվող առարկաների, և
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
ռուսաց լեզուի համար
Պայմանների մասին տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը Լ. Դանիէլեանից, կամ դիմել դպրոցի հոգաբարձու Գէորգ Իսրայէլեանցին՝ через Ордубатъ. сел. Мегри.
(չ. կ. հ.) 3—3

ՈՐՈՎՀԵՏԵՒ Անդրկովկասի գիւղացիները
յաճախ դիմում են Միութեանս Հողային Մասնաճիւղին խնդրելով իրանց կարիքները ծածկելու համար գնել հողային բաժիններ, ուստի և Մասնաճիւղս սրանով յայտնում է, որ այն
ՀՈՂԱՏԷՐԵՐԸ,
որոնք ցանկանում են ծախել իրանց կալուածքները,
պէտք է դիմեն այդ մասին յայտարարութեամբ Բ. Հ. Կ. Միութեան գրասենեակը (Красноводская ул. д. И. Д. Адамова), որը անկողմնապահօրէն կը միջնորդէ վաճառողների և գնողների միջև։
(հ. շ. ե.) 3—3

Պահանջեցէք իսկական պղպջուն ջրեր
Մ. ԼԱԳԻՁԷԻ եւ ԸՆԿ.
կատարելագործված գործարանի
Հոտը եւ անուշահոտութիւնը գերազանց
Գործարանին կից դէկօրատիվ բուսականութեամբ գեղեցիկ զարդարված տէրրաս, ուր կարելի է խմել սառուցի նման սառը ջուր։ Գործարանը գտնվում է Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Մանթաշեանի տանը։
Տէլէֆօն գործարանի № 411։
(չ. կ.) 10—6

Լոյս տեսաւ
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ
ՄԹՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ
Բանաստեղծութիւններ
Առաջին գիրք։ Գինն է 50 կօպ.։
Դիմել «Գուտտենբերգ և «Փարոս» գրախանութներին։
(19, 23) 2—2

Դիլիջանի դպրոցի համար հարկաւոր են
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
—ԵՒ—
ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ
24 դասով և 400 ր. վարձով։ Դիմել՝ Делижанъ, Вагану Матиняну.
(օ. մ.) 3—2

ՆԿԱՐԻՉ Բ. ՃԷՊԷՅԵԱՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ և ՈՍԿԵՋՕԾԵԼՈՒ
արհեստանոցը առայժմս Թիֆլիսից տեղափոխված է Ստաւրօպօլ,
որտեղ առաջվայ պէս ընդունվում են
ՄԻՄԻԱՅՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
ՉՈՒՆԵՒՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՏՐՎՈՒՄ Է ԱՊԱՌԻԿ
Պատուէրները կատարվում են
Ընտիր Հայկական Ճաշակով
Ցուցակը և պայմանները ուղարկվում են ձրի։
Դիմել՝ Ставрополь н/К., Барятинская № 31. Б. Джебеянцъ.
(չ. ու. կ.) 5—5

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ
ԻՒՐԵՎԻՉԻՑ ՓՈԽԱԴՐԱԾ ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
1. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Ա. տարի, 2-րդ հրատարակութիւն, զգալի ճոխացրած 15 կ.
2. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Բ. տարի, 2-րդ հրատարակութիւն. յաւելուածներով ու պատկերներով 25 կ.
3. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Գ. տարի 25 կ.
4. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Շապօշնիկովից ու Վալցովից փոխադր. կոտորակների տեսութիւն և ընդհանուր կանոններ. պատկերազարդ Ա. մաս. 30 կ.
5. Համառօտ երկրաչափութիւն. գրոյցներ երկրաչափական մարմինների մասին Ա. մաս. 25 կ.
Թւաբանական օրինակների Ա. և Բ. տարի ձեռնարկները ընդունված և թոյլատրված են հայոց ծխական դպրոցների համար Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից։
Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրախանութը։ (ե. կ.) 6—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Սրանով յայտարարում է, որ հինգշաբթի, յուլիսի 25-ին, ցերեկվայ ժամը 12-ը
նշանակված է
ԱՃՈՒՐԴ
Ընկերութեան վրա մնացած բոլոր կալուածքների։
Կալուածքների ցուցակը կախված է ընկերութեան շէնքի մուտքի մօտ։ Պայմանների մասին տեղեկանալ ընկերութեան Վարչութեան մօտ։
(17, 20, 23) 3—3

Типографія „Экономія" Ав. Мугдусіакопова съ С-ми; Большая Банкская ул. № 3.